ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ԹՈՎՄԱ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՄՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(11.12.2011թ.)

«Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ»:
(Ղուկ. ԺԴ 15)

Մի ճաշկերույթի ժամանակ, երբ մեր Տերը խոսում էր երկնային ու երկրային ճշմարտությունների մասին, սեղանակից փարիսեցիներից մեկը բացականչեց. «Երանի նրան, ով ճաշ կուտի Աստծո արքայության մեջ» (Ղուկ. ԺԴ 15): Ի պատասխան փարիսեցու խոսքի՝ Տերը պատմեց Ավետարանի ամենաուսանելի ու խրատական պատմություններից մեկը. մի մարդ խնջույքի պատրաստություն է տեսնում եւ ուղարկում իր ծառային, որպեսզի հրավիրյալներին տեղեկացնի ընթրիքի մասին: Տարբեր պատճառներով, սակայն, հրավիրվածները հրաժարվում են. մեկն իր արտի գործերն է պատճառ բերում, մյուսը՝ նոր գնած 5 լուծ եզը, իսկ երրորդը՝ իր նոր ամուսնացած լինելու հանգամանքը: Եւ, ի վերջո, մեծահարուստ մարդու հրավերով ծառաները ճաշկերույթի սրահը լցնում են աղքատ, հաշմանդամ, կաղ ու կույր մարդկանցով:

Ըստ Եկեղեցու Հայրերի՝ առակի մեջ հիշատակվող առաջին հրավիրվածները հրեաներն են, ովքեր, այդքան նախանձախնդրորեն սպասեցին Մեսիային, սակայն Վերջինիս գալուց հետո՝ քամահրեցին ու չընդունեցին Նրան: Իսկ աղքատներ են կոչվում հեթանոսները, ովքեր, ճշմարիտ Աստծո գիտության տեսակետից հոգեւոր առումով չքավոր էին, մերկ էին՝ գիտակցաբար ու անգիտակցաբար մերժելով Նրան ծառայելու կոչումը:

Ավետարանի մեջ արքայություն է անվանվում նաեւ հենց Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոս, ինչպես եւ գրված է՝ «Ապաշխարեցեք, քանզի մոտեցել է երկնքի արքայությունը» (Մատթ. Գ 1): Տարօրինակն այն էր, որ Արքայությունը նստած էր իրենց մեջ, իսկ փոխանակ օգտվելու Նրա ողորմության ու օրհնության սկուտեղից՝ իրենք երանի էին տալիս հենց իրենց...

Դա նման է նրան, որ այս սուրբ տաճարում հավաքված հավատացյալներից մեկը բացականչի, թե երանի այն մարդուն, ով հիմա Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում է մասնակցում Սուրբ Պատարագի արարողությանը:

Եթե Տերը արքայություն է կոչում նաեւ Իրեն, ուրեմն Եկեղեցին էլ, լինելով Նրա մարմինը, նույնպես արքայություն է, որտեղ Տիրոջ մեծ ընթրիքի օրն ու ժամը բոլորդ գիտեք՝ յուրաքանչյուր կիրակի, առավոտյան:

Ըստ Տիրոջ խոսքի՝ ինչերն են մարդուն հետ պահում Տիրոջ հրավերն ընդունելուց եւ Տիրոջ փառավոր ընթրիքին մասնակցելուց.

- հրավերը մերժող առաջին մարդու պարագային՝ արքը,
- երկրորդի համար հրավերը չընդունելու պատճառն էր նրա գնած 5 լուծ եզը,
- իսկ երրորդի համար ընտանիքը:

Պատահական չէին Տիրոջ բերած օրինակները: Արքը կարող է խորհրդանշել մեր բիզնեսը կամ մեր աշխատանքը, եզները կարող են նշանակել այն միջոցները, որոնցով հաջողության ենք հասնում մեր աշխատանքային կյանքում, դիցուք՝ դրամը, իսկ երրորդ պատճառը ընտանիքն է, որի կարիքները հոգալու համար էլ մարդն աշխատում է եւ չարչարվում:

Հիմա, քրիստոնեական տեսանկյունից՝ մե՞ղք է ընտանիքին հոգ տանելը: Ոչ, իհարկե: Սուրբ Պողոս առաքյալն է ասում, որ ով հոգ չի տանում իր ընտանիքին հավատն ուրացել է եւ ավելի չար է, քան անհավատը (Ա Տիմ. Ե 8): Ընտանիքին հոգ տանելը մեղք չէ, բայց մեղք է քո եւ քո ընտանիքի անդամների հոգիները անխնամ թողնելը: Մեղք է Տիրոջ հրավերը մերժելը, քանզի դրանով զրկում ու զրկվում ես Բարձրյալի օրհնությունից, առանց որի քրիստոնյան չպիտի պատկերացնի իր երկրային կյանքը, քանի որ դրանով է մեծապես պայմանավորված նաեւ մեր երկնային կյանքը՝ ապրվածային կեցությանը հաղորդակից լինելու երանական վիճակը:

Մի կին երազում տեսնում է Տեր Հիսուսին, որ հայտնում է, թե 3 օրից գալու է իրեն այցելության: Կինն արթնանալով սկսում է Տիրոջն ընդունելու պատրաստության եւ իր տան մաքրության աշխատանքները: Ընթացքում, սակայն, մի տարօրինակ բան է նկատում, երբ հարդարում է բազկաթոռները, խոհանոցի իրեր են խառնվում, ուղղում է աթոռները՝ բարձերն են ընկնում գետին եւ այսպես շարունակ: Մոտենում էր օրը, բայց կինն իրեն անպատրաստ էր համարում սպասված ընդունելությանը: Եւ հանկարծ հնչում է դռան զանգը: Հուսահատ, բայց Տիրոջը ժամ առաջ տեսնելու անհուն ցանկությամբ լցված կինը բացում է դուռը, սակայն գլուխը կախում՝ ամաչելով իր տան անկարգ վիճակից: Եւ հանկարծ աչքն ընկնում է տան մեջ եւ տեսնում է ամեն բան կարգի բերված:

Ուրեմն, Տիրոջ հրավերն ընդունելը եւ ապա Տիրոջ ներկայության վայելքն արդեն իսկ օրհնություն եւ հաջողություն է բերում մեր աշխատանքային ու ընտանեկան կյանքում:

Հիշենք այսօրվա մարգարեական ընթերցվածքը Հրեաստանի Սենեքերիմ թագավորի մասին, որ իր երկրի վրա հարձակված Ասորեստանի զորքերի բազմությունից հուսահատ՝ ապավինեց Աստծո ողորմությանը եւ մեկ նետ անգամ չարձակեց թշնամու վրա... երկնային զորքերի միջամտությամբ թշնամին հեռացավ՝ թողնելով 185.000 զինվորների դիակներ (Ես. ԼԷ 14-38):

Սիրելիներ, Տիրոջ ներկայությամբ հաղթահարելի են դառնում բոլոր փորձություններն ու դժվարությունները:

Ուրեմն, պիտի հասկանանք՝ չարը, որի գլխավոր նպատակն է հեռացնել մարդուն Աստծուց, փորձում է մեզ առավել չափով մեր աշխատանքի, դրամի եւ ընտանիքի միջոցով:

*****

Մենք պետք է գիտակցենք նաեւ, որ բացի մեր մարմնավոր հարազատներից, կա նաեւ հոգեւոր բարեկամություն, որի մեջ մտնում են բոլոր զավակները Առաքելական Սուրբ Եկե-

ղեցու: Մենք բոլորս միմյանց հետ կապված ենք հոգեւոր արյունակցական ազգակցությամբ: Մենք ենք Տեր Հիսուս Քրիստոսի ընտանիքը, աշխարհի ամենամեծ ու բազմանդամ ընտանիքը: Մենք բոլորս ծնվում ենք նույն արգանդից՝ Սուրբ Մկրտության Ավազանից, մեր ճաշի սեղանը այս Սուրբ Սեղանն է, մեր կերակուրը՝ Սուրբ Հաղորդությունը: Եթե համարում ենք մեզ Քրիստոսի ընտանիքի անդամ, ուրեմն պետք է կատարենք այդ ընտանիքի Հոր՝ Աստծո պատգամները, լսենք նրա պատվիրանները, հնարավորինս կատարենք դրանք եւ միով բանիվ, ընդունենք հրավերը՝ երանելի ենք մենք եւ դուք, սիրելի հավատացյալներ, որ սեղանակից ենք Տիրոջը:

Եկեք դուրս գանք եւ հարցնենք մարդկանց, թե ինչո՞ւ չեն մասնակցում Տիրոջ ընթրիքին, ինչո՞ւ են մերժում Նրա ներկայությունը վայելելու, Նրան հաղորդվելու հրավերը: Մեծավ մասամբ մեր լսած պատասխանները այդքան էլ չեն տարբերվի Տիրոջ պատմած առակի մեջ հիշատակվող պատճառներից:

Երբ հիվանդանոցում առողջացող հիվանդներին հարցնում ես, թե ինչու գոնե ամիսը 1 կամ 2 անգամ կանոնավոր կերպով չեք մասնակցում Սուրբ Պատարագին, պատասխանում են, թե աշխատում են, ժամանակ չունեն, իսկ հատկապես գյուղաբնակ մեր հավատացյալներն ասում են, թե գյուղի գործերը շատ են: Իսկ հարցնում ենք, ինչպես է, որ հիմա օրերով հիվանդանոցում պառկած եք մնում, ասում են՝ դե հիվանդ ենք, ինչ անենք: Սիրելիներ, եթե մենք կարողանանք տեսնել մեր հոգու հիվանդությունները, հավանաբար, եկեղեցուց դուրս չենք գնա:

Ինչո՞ւ ենք այդքան սիրում սատանային, որ ամենաշատն է ատում մեզ, եւ ինչո՞ւ ենք այդքան ատում Քրիստոսին, որ ամենաշատն է սիրում մեզ:

****

Տիրոջ հրավերն ընդունելուց եւ եկեղեցի հաճախելուց բացի շատ կարեւոր է նաեւ ընթրիքին պատրաստ ներկայանալը... Մատթեոս ավետարանչի մոտ այս նույն պատմությունը կարեւոր լրացումներով է ներկայացված... այնտեղ երկնքի արքայությունը նմանվում է մի թագավորի, որ իր որդու հարսանեկան խրախճանքի ընթրիքին է հրավիրում շատերին, որոնք տարբեր պատրվակներով հրաժարվում են: Նա էլ ուղարկում է իր ծառաներին ու կանչում եւ՛ չար, եւ՛ բարի մարդկանց ու հարսանիքը լցվում է հրավիրվածներով, բայց հարսանիքի տերը տեսնում է մեկին, որ հարսանեկան զգեստ չէր հագել եւ դուրս է անում նրան (Մատթ. ԻԲ 1-14): Արդեն պարզ է, որ եթե Ղուկաս ավետարանչի կողմից գրի առնված նույն պատմության մեջ ընթրիքին մասնակցում էին կաղեր եւ կույրեր, ուրեմն այստեղ զգեստ ասելով խոսքը ոչ թե թանկարժեք շորերի մասին է, այլ պատրաստության՝ հոգեւոր, բարոյական եւ ֆիզիկական պատրաստության:

Հոգեւոր պատրաստության առումով անձը պետք է Տիրոջ ընտանիքի անդամ լինի, Եկեղեցու զավակ, այսինքն՝ մկրտված անձ, որ նաեւ անցած պետք է լինի ապաշխարության խորհրդի միջով... այսինքն՝ պետք է մասնակցած լինի ընդհանրական խոստովանությանը, որ կատարում ենք Սուրբ Պատարագի ընթացքում... պետք է զղջա իր կատարած մեղքերի համար, խոստովանի դրանք եւ պատրաստ լինի դրանց փոխարեն հատուցում տալու:

Բարոյական պատրաստության տեսակետից աղքատ պետք է լինենք մարմնավոր եւ աշխարհիկ չափից դուրս զվարճանքների մեջ, տկար պիտի լինենք մեղք գործելիս, կաղ՝ անօրենության ճանապարհով գնալիս, համր՝ հայհոյանք ու բամբասանք անելիս:

Իսկ ֆիզիկական պատրաստության տեսակետից պետք է քաղցած ներկայանանք Տիրոջ Սուրբ եւ Կենարար մարմնին ու անապական Արյանը մոտենալու համար:

Պատրաստությունը կարեւոր է, որպեսզի չլինի, թե ընթրիքի մասնակցությունն ու սուրբ Հաղորդությունը մեզ համար անեծք լինեն օրհնության ու շնորհի փոխարեն:

*****

Երկնքի կամ Աստծո արքայության երկու իմաստներ կան՝ ներկա եւ ապագա՝ գալիքը: Արդեն եկած արքայության մասին հասկացանք, որ այն Հիսուս Քրիստոսն է, իսկ նրա համբարձումից հետո Նրա գործը շարունակող հաստատությունը եւ Նրա մարմինը՝ Եկեղեցին:

Գալիք արքայությունը մեր Տիրոջ հետ վերջնական միությունն է, Նրա ներկայության հավիտենական վայելումը: Սա համապատասխանում է Սուրբգրային հարսանեկան ուրախությանը, որը ներկայացվում է Հայտնության գրքի ԺԹ. գլխում, փեսայի՝ Հիսուս Քրիստոսի եւ հարսի՝ Եկեղեցու միության մեծ ուրախության խնջույքը:

Եւ ովքե՞ր են այդ փառավոր խնջույքի մասնակիցներն ու հրավիրվածները լինելու... իհարկե նրանք, ովքեր այս կյանքի հոգեւոր ընթրիքներին են մասնակցել, նրանք ովքեր ճաշակել են Տիրոջ մարմինն ու արյունը եւ, ըստ իր խոսքի, հավիտենական կյանքի ժառանգորդ դարձել, ձգտել են իրենց երկրավոր կյանքը ապրել սիրով, հավատքով ու սրբությամբ:

*****

Մեր ժողովրդի շատ զավակների կողմից Տիրոջ հրավերի մերժման պատճառ եկեք համարենք նաեւ ամեն մեկս մեզ: Թող ամեն մեկը հարց տա իրեն՝ ես ի՞նչ եմ անում, որ Տիրոջ ընթրիքի լուրը տարածեմ... վկայո՞ւմ եմ արդյոք հավատքիս մասին, այո ես գալիս եմ եկեղեցի, մասնակցում եմ, հաղորդվում եմ Տիրոջ հետ, շատ լավ է, փառք եմ տալիս դրա համար Աստծուն.. իսկ մյուսների հանդեպ, մկրտված, բայց չգիտակցող քրիստոնյաների համար ես որեւէ պատասխանատվություն կրո՞ւմ եմ արդյոք:

Մենք որպես Բարձրյալ Աստծո ծառաներ՝ երկնքի խորհրդանիշ այս սուրբ Խորանից ամեն կիրակի եւ ամեն պատեհ առիթի ըստ Մեր Տիրոջ հրամանի՝ կանչում ենք հրավիրվածներիդ մասնակիցը դառնալու Տիրոջ երանական ընթրիքին: Դուք էլ, սիրելիներ, արդեն պատրաստ ընթրիքի լուրը տարեք Ձեր ընտանիքի անդամներին, հարեւաններին ու հարազատներին, քանզի Աստված այսօրվա Իր պատգամով կրկին ու կրկին վերահաստատում է Իր հրավերը, եւ մեզ մնում է այլեւս պատրաստվել եւ հաճախել Տիրոջ հարկը, որտեղ մշտնջենապես փառավորվում է Ամենասուրբ Երրորդությունը եւ մեզ բաշխում Իր սերը, շնորհն ու խաղաղությունը. ամեն: